

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Մարզկենտրոնը՝

ք. Կապան

Տարածաշրջանները՝

Կապան,

Գորիս,

Միսիան,

Մեղրի

Քաղաքները՝

Կապան,

Գորիս,

Միսիան,

Քաջարան,

Մեղրի,

Ագարակ,

Դաստակերտ



Տարածքը	4 506 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	15.1%
Քաղաքային համայնքներ	7
Գյուղական համայնքներ	102
Քաղաքներ	7
Գյուղեր	127
Բնակչության թվաքանակը 2013թ. տարեվերջին	141.0 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	94.7 հազ. մարդ
գյուղական	46.3 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2013թ.	4.7%
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	67.2%
Գյուղատնտեսական նշանակության հողեր	308 320.4 հա
այդ թվում՝ վարելահողեր	43 835.5 հա

ՀՀ Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Ադրբեջանին:

ՀՀ Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Անդրկովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3 906 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380մ):

Կապան քաղաքից հարավ-արևելք՝ Ծավ գետի ավազանում է գտնվում բնական սուսիների ռեիկլտային պուրակը, որը զբաղեցնում է գրեթե 120 հա, մակերեսով 2-րդն է աշխարհում: Այդ եզակի պուրակի որոշ ծառերի տարիքն անցնում է մի քանի հարյուր տարուց, տրամագիծը հասնում է 3 մ-ի, իսկ բարձրությունը՝ 30-35 մ-ի: Այն սահմանակից է «Շիկահող» պետական արգելոցի Մթնածորի տեղամասին, որը հայտնի է իր կուսական, անխաթար բնությամբ, լանշաֆտներով և կենդանական աշխարհով: Արգելոցի Շիկահողի տեղամասը գտնվում է քաղաքից 25 կմ հեռավորության վրա: Ունի հազվագյուտ բնություն, թավուտ անտառներ, նեղ կիրճեր, հարուստ կենդանական աշխարհ, տարածքում կան պատմամշակութային հուշարձաններ:

Ողջի գետի աջ ափին, անտառում է գտնվում Վահանավանքը (X-րդ դար)՝ պատմական Սյունիքի հոգևոր և մշակութային կենտրոններից մեկը, իսկ 25 կմ հեռավորության վրա՝ նեղ կիրճերով, թավուտ անտառներով **«Շիկահող» պետական արգելոցը:**

Ծովի մակերևույթից 3 250 մ բարձրության վրա՝ Կապույտ լճից սկիզբ է առնում **Մեղրի գետը**, իսկ Կապուտջուղ լեռան հալոցքաջրերից՝ Կապուտջուղ գետը, որի հետ Քաջարանց գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:

Մարզի ամենագրավիչ վայրերից մեկը, հայկական միջնադարյան ճարտարապետության հուշարձան **Տաթևի վանական համալիրն** է (IX դար), որտեղ 1390-1435 թթ. գործել է Տաթևի նշանավոր համալսարանը:

2010թ.-ին շահագործման է հանձնվել 5.7 կմ երկարությամբ աշխարհի ամենաերկար «Տաթևեր» ճոպանուղին (առավելագույն բարձրությունը 380 մ), որն անցնում է Որոտան գետի կիրճով, ձգվում սարերի վրայով և Հալիձոր գյուղից հասնում Տաթևի վանական համալիր:

Որոտանի կիրճում են գտնվում Տաթևի ՀԷԿ-ը՝ Որոտանի ՀԷԿ-երի կասկադի առաջնեկը և Շամբի ջրամբարը, որտեղից 18 կմ երկարությամբ թունելով ջուրը հասնում է Տաթևի ՀԷԿ-ի տուրբիններին:

2012թ. գործարկվեց Հին Խնձորեսկի երկու ձորափը (Ղանդունց նովն ու Ներքին թաղը) իրար միացնող իր տեսակի ու չափի մեջ եզակի կախովի կամուրջը: Կամուրջը հսկա ձորի մի ափից մյուսը ձգվում է ավելի քան 160 մետր: Բարձրությունն ամենախոր տեղում 63 մ է: Կամրջի բանուկ զանգվածը կախված է ամուր ու ձիգ ճոպաններից (կախովի կամուրջ), այդ պատճառով էլ քայլելիս կամուրջը ճոճվում է, այդ իսկ պատճառով ժողովուրդն այն անվանել է «ճոճվող կամուրջ»:

Միսիան քաղաքից 6 կմ հեռավորության վրա է գտնվում **Շաքիի ջրվեժը**՝ Փոքր Կովկասի լեռների ամե-նախոշոր ջրվեժը (բարձրությունը 18 մ):

Մարզի պատմամշակութային հուշարձանների մեջ հայտնիներից են «Ձորաց քարեր» հուշարձանախումբը, Բաղաբերդի, Հալիձորի, Որոտնաբերդի ամրոցները, Տաթևի, Որոտնա, Բդենու վանքերը, Վահանավանքի և Երիցվանքի վանակն համալիրները, Աղիտուի դամբարանային հուշարձանը, Միսիանի նեոլիթի ժամանակա-շրջանի դամբարանաբլուրը, Մեղրի քաղաքի փոքր թաղի եկեղեցին և քաղաքի պաշտպանական նշանակության աշտարակները:

Միսիան քաղաքից 3.2 կմ դեպի հյուսիս գտնվում է «**Ձորաց քարեր**» **հուշարձանախումբը**, որը հայտնի է նաև Քարահուն անունով: Այն մեգալիթյան դարաշրջանի (Ք.ա. II հազարամյակ) ծնունդ է: «Ձորաց քարեր» հանդիսանում են աշխարհում հայտնի հնագույն մեգալիթիկ համալիրներից և աստղադիտարաններից մեկը, հնդեվրոպական քաղաքակրթության քարեդարան-վկայարան, որի գաղտնիքները դեռևս բացահայտված չեն գիտության կողմից: Ձորաց քարերը հաճախ անվանում են «հայկական Սթոունհենջ»՝ նկատի ունենալով, որ ուսումնասիրողների կարծիքով այստեղ ևս առկա է մեգալիթիկ աստղադիտարան:

ՀՀ Մյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի պերլիտի և դիատոմիտների պաշարներ):

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը **արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են:**

2013թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 16.5%,
- գյուղատնտեսություն 6.8%,
- շինարարություն՝ 5.4 %,
- մանրածախ առևտուր՝ 1.4 %,
- ծառայություններ՝ 1.3%:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է և էլեկտրակենտրոնային արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրակենտրոնային գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին:

Ճյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է **բուսաբուծության** (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և **անասնաբուծության** (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր անասունների բուծում) մեջ:

Բեռնատրանսպորտի սաղարկումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Մարզի տարածքով է անցնում Հայաստանի Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ. շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք «Կապան-Քաջարան-Մեղրի» միջպետական ճանապարհին՝ տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս:

Մարզով են անցնում Արցախը Հայաստանին կապող կարևոր ավտոմայրուղին և Իրանի Իսլամական Հանրապետությունը ցամաքային անմիջական կապով Հայաստանին կապող միակ ճանապարհը:

Կապան քաղաքը (2013թ. տարեվերջ՝ 43.0 հազ. բնակիչ) գտնվում է Խուստուփ լեռան ստորոտում (3 201 մ), հեռավորությունը Երևանից 301 կմ:

Տնտեսության առաջատար ճյուղն արդյունաբերությունն է, ընդհանուր ծավալում գերակշռողը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունը (սննդամթերքի, կարի, ոչ հանքային շինանյութերի, այլումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և սարքավորանքի արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Քաջարան քաղաքը (2013թ. տարեվերջին՝ 7.1 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 327 կմ հեռավորության վրա) ՀՀ գունավոր մետալուրգիայի կենտրոնն է՝ պղնձի և մոլիբդենի հզոր հումքային բազա հանդիսացող հազվագյուտ հանքավայրի շահագործման հիման վրա:

Տնտեսության հիմնական և առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է: Քաղաքի տնտեսության մեջ իր բաժինն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որում առանձնանում են սննդամթերքի և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը:

Գորիս քաղաքի (2013թ. տարեվերջին՝ 20.5 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 236 կմ հեռավորության վրա) տնտեսության հիմնական ճյուղն արդյունաբերությունն է: Հիմնականում զարգացած են էլեկտրաէներգիայի արտադրությունը, սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների, կարի, այլումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների և էլեկտրասարքավորանքի արտադրությունները:


Միսիան քաղաքի (2013թ. տարեվերջին՝ 14.9 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 206 կմ հեռավորության վրա) տնտեսության ծավալում գերակշռողն էլեկտրա-էներգիայի արտադրությունն է, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև սննդամթերքի և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունները:

Դաստակերտ քաղաքի (գտնվում է Երևանից 226 կմ հեռավորության վրա) բնակչությունը 2013թ. տարեվերջին կազմել է 0.3 հազ. մարդ: Աշխատանքներ են տարվում պղնձի և մոլիբդենի հանքերը վերագործարկելու համար:

Մեղրի քաղաքի (2013թ. տարեվերջին՝ 4.5 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 373 կմ հեռավորության վրա) տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը մշակող արդյունաբերությունն է: Որոշակի տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիայի և մրգերի պահածոների ու հյութերի արտադրությունը:

Ագարակ քաղաքի (2013թ. տարեվերջին՝ 4.4 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 385 կմ հեռավորության վրա) տնտեսության առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույնը գունավոր մետաղների արդյունահանումն է: Քաղաքի տնտեսության զարգացումը կապված է պղնձամոլիբդենային արտադրության հետ: Ագարակում են գտնվում Հայաստան-Իրան սահմանային և մաքսային կետերը:

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2014թ. հունվարի 1-ի դրությամբ



ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը				
	2009	2010	2011	2012	2013
Մանրածախ առևտրի օբյեկտներ, բնդամներ	472	440	415	383	398
այդ թվում՝					
խանութներ	184	174	173	167	183
կրպակներ	244	219	196	174	168
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	1	1	1	-	-
սպառողական ապրանքների շուկաներ	5	4	4	4	8
առևտրի այլ օբյեկտներ	38	42	41	38	39

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը				
	2009	2010	2011	2012	2013
Պետական նախադպրոցական	46	49	50	52	52
Պետական հանրակրթական	125	123	121	121	121
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	19	17	17	17	17
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	4	4	3	4	4
Պետական միջին մասնագիտական ուսումնական	8	8	7	7	7
Պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	2	2	2	2	2
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
Կապան	ք. Կապան	42 967
Գորիս	ք. Գորիս	20 471
Սիսիան	ք. Սիսիան	14 901
Քաջարան	ք. Քաջարան	7 129
Մեղրի	ք. Մեղրի	4 565
Ագարակ	ք. Ագարակ	4 386
Դաստակերտ	ք. Դաստակերտ	313

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
1	Ագարակ		177
2	Ալվանք		305
3	Ախյաթյան		550
4	Ակներ		1 376
5	Աղիտու		409
6	Աղվանի		83
7	Աճանան		168
8	Անգեղակոթ		1 831
9	Անտառաշատ		101
10	Աշոտավան		671
11	Առաջաձոր		152
12	Արավուս		207
13	Արծվանիկ		546
14	Արևիս		77
15	Բալաք		178
16	Բարձրավան		143
17	Բնունիս		162
18	Բոնակոթ		2 182

¹ Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ *
19	Գեղանուշ	•Գեղանուշ •Գոմարան	287
20	Գեղի	•Գեղի •Գեղավանք •Կարդ •Կիցք •Վերին Գեղավանք •Քարուտ	182
21	Գետաթաղ		203
22	Գորայք		471
23	Գուդեմնիս		39
24	Դավիթ Բեկ		837
25	Դարբաս	•Դարբաս •Շամբ	1 175
26	Եղեգ		98
27	Եղվարդ		256
28	Թանահաստ		77
29	Թասիկ		288
30	Իշխանասար		255
31	Լեկվազ		662
32	Լեռնաձոր	•Լեռնաձոր •Կավճուտ •Մուսալլամ •Ներքին Գիրաթաղ •Վերին Գիրաթաղ	877
33	Լիճք		118
34	Լծեն		85
35	Լոր		414
36	Խղրանց		49
37	Խնածախ		930
38	Խնձորեսկ		2 305
39	Խոզնավար		417
40	Խոտ		925
41	Ծավ	•Ծավ •Շիշկերտ	363
42	Ծղուկ		453
43	Կաղնուտ		106
44	Կարճևան		225
45	Կոռնիձոր		1 260
46	Կուրիս		60
47	Հայիձոր		594
48	Հարթաշեն		749
49	Հարժիս		934
50	Հազավան		258
51	Ձորաստան		52
52	Ճակատեն		136
53	Մուցք		357
54	Ներքին Խնձորեսկ		288
55	Ներքին Խոտանան		70
56	Ներքին Հանդ		56
57	Նժդեհ	•Նժդեհ •Յդունի	143
58	Նորաշենիկ		109
59	Նորավան		550
60	Նոր Աստղաբերդ	•Նոր Աստղաբերդ •Աջաբաջ •Գետիշեն •Ոչեթի	79
61	Նոնաձոր		121

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ *
62	Շաղատ		1 252
63	Շաքի		1 345
64	Շենաթաղ		406
65	Շիկահող		119
66	Շինուհայր		2 723
67	Շվանիձոր		280
68	Շրվենանց		61
69	Շուռնուխ	•Շուռնուխ •Աղբուլաղ •Վանանդ •Ձորակ(Փայտամշակման գ.կ.)	175
70	Որոտան (Գորիսի տարածաշրջան)		309
71	Որոտան (Սիսիանի տարածաշրջան)		311
72	Չափնի		71
73	Սայվարդ		222
74	Սառնակունք		491
75	Սյունիք	•Սյունիք •Բարգուշատ •Դիցմայրի •Խորձոր •Սգնակ	1 139
76	Սպանդարյան		491
77	Սվարանց		266
78	Սրաշեն		102
79	Սևաքար		94
80	Վահրավար		40
81	Վաղատին		679
82	Վաղատուր		415
83	Վանեք		62
84	Վարդանիձոր	•Վարդանիձոր •Այգեձոր •Թխկուտ	322
85	Վարդավանք		93
86	Վերին Խոտանան		179
87	Վերիշեն		2 511
88	Տաթև		925
89	Տանձավեր		207
90	Տանձատափ		97
91	Տաշտուն		106
92	Տավրուս		80
93	Տեղ		2 535
94	Տոյոբս		463
95	Տորունիք		129
96	Ուժանիս		79
97	Ուլծ		602
98	Քաշունի		30
99	Քաջարան		213
100	Քարահունջ		1 326
101	Քարաշեն		560
102	Օխտար		70

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2013թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	5 081	4 919
Ծնվածներ, մարդ	105	49	56
Մահացածներ, մարդ	90	42	48
Ամուսնություններ	53	X	X
Ամուսնալուծություններ	8	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակավայրերում, քառ.մ	29.8	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	312	149	163
հանրակրթական	1 174	575	599
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	170	117	53
նախնական մասնագիտական (արհեստագործական)	25	8	17
միջին մասնագիտական	86	45	41
բարձրագույն մասնագիտական	126	59	67
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	62 856
Մարզիկներ, մարդ	126	27	99
Զբաղվածներ, մարդ	4 330	1 950	2 380
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	167	136	31
բժիշկներ	20
միջին բուժանձնակազմ	56
Գործազուրկներ, մարդ	587	449	138
Մոցիայական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 813
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	292	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	33 731
թատրոն	1 429
համերգ	-	-	-
թանգարան	602
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	39	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	23	X	X
միջին ծանրության	12	X	X
ծանր	4	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: